01/10.5/3225-10
2010-03-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գագիկ Գևորգյանի, Բագրատ Սարգսյանի, Լիլիթ Գալստյանի, Արտյուշ Շահբազյանի և Արծվիկ Մինասյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Նախագծով առաջարկվում է շուրջ երկու անգամ նվազեցնել բեռնատար ավտոմեքենաներով ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարների հաշվարկման գոտիականության հետ կապված ուղղիչ գործակիցները:

Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նախագծի ընդունումը, այլ հավասար պայմաններում, կհանգեցնի գործունեության նշյալ ոլորտից հավաքագրվող պետական եկամուտների մակարդակի՝ շուրջ երկու անգամ նվազեցման: Նախագծի հիմնավորման

համաձայն, նախագծի ընդունումը նպատակ ունի նպաստելու սոցիալական խնդիրների լուծմանը, սակայն նույն հիմնավորմամբ նշված չէ, թե նախագծի ընդունումն ինչպես կանդրադառնա առկա սոցիալական խնդիրների լուծման վրա։

Հայտնում ենք, որ 2009 թվականին Հայաստանի Հանրապետությունում բեռնափոխադրումներ իրականացրել է շուրջ 263 հարկ վճարող, որոնցից հաշվարկվել է 269,2 մլն դրամ։

Միաժամանակ, գտնում ենք, որ հանրապետությունում ստեղծված սոցիալական խնդիրները պետք է լուծել հասցեական սոցիալական քաղաքականության շրջանակներում և ոչ թե նմանատիպ նախագծերի ընդունմամբ։

Հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարն ուսումնասիրելու է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված ուղղիչ գործակիցների վերաբերյալ դրույթները և ներկայացնելու է առաջարկություն՝ խնդրին համալիր լուծում տալու նպատակով։

Ելնելով նշվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանը։

Հարգանքով՝

Տիգրան Սարգսյան

Նախագիծ
Պ-838-26.02.2010-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Հաստատագրված վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. «Հաստատագրված վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-236, 22 հուլիսի 1998թ.) 41-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր բովանդակությամբ հետևյալ խմբագրությամբ՝

«2. Բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման գոտիականության հետ կապված ուղղիչ գործակիցներն են՝

Վայոց ձորի և Տավուշի մարզերում	0.5
Շիրակի մարզում	0.6
Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու մարզերում	0.7
Սյունիքի մարզում	0.8
Արարատի, Արմավիրի, Կոտայքի մարզերում	0.9
Երևան քաղաքում՝	1.0

Բեռնատար ավտոմեքենաների միջմարզային, միջպետական բեռնափոխադրումների իրականացման դեպքում կիրառվում է այդ վայրերի համար՝ սույն կետով սահմանված գործակիցներից առավելագույնը։

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2010 թվականի հուլիսի 1-ից։

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հաստատագրված վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ բեռնատար ավտոմեքենաներով գործունեություն իրականացնողների հաստատագրված վճարների հաշվարկման գոտիականության հետ կապված ուղղիչ գործակիցների նվազեցումը, որը թույլ կտա սոցիալական այդ հատվածին որոշ չափով զերծ պահել ճգնաժամի ուղղակի ազդեցությունից, որը պայմանավորված է բեռնափոխադրումների ծավալների անկմամբ։ Առաջարկվող մոտեցումը հնարավորություն է տալիս չխուսափել հարկային դաշտից, ինչպես նաև նպաստում է կենսաթոշակային պարտադիր վճարումների կատարմանը։

Օրինագիծը համահունչ է նաև սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ պետական քաղաքականությանը։